

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1915 թ. ՄԱՅԻՄԻ 30)

Հայոց ցեղասպանության ավելի խորը ու համակողմանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի թուրքական վավերագրական փաստաթղթերը գիտական շրջանառության մեջ դնելը: Վերջին տարիներին Թուրքիայում հրատարակվում են Օսմանյան պետական արխիվներում պահվող որոշ փաստաթղթեր: Անտարակույս, դա արվում է ոչ թե այդ ծանրագույն հանցագործության վերաբերյալ առկա փաստագրական նյութը համալրելու, այլ պատմական ճշմարտությունը կեղծելու նպատակով: Սակայն թուրք հեղինակների նախաձեռնությամբ լույս ընծայված նմանօրինակ հրատարակություններում ժամանակ առ ժամանակ հնարավոր է հանդիպել այնպիսի վավերագրերի, որոնք, ի հակադրումն դրանք հրապարակողների նկրտումների, մեկ անգամ ևս հավաստում են օսմանյան իշխանությունների՝ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների իրական նպատակները:

Այս տեսակետից կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի բռնի տեղահանության վերաբերյալ օսմանյան կառավարության՝ Նախարարների խորհրդի (Meclis-i Vükelâ) 1915 թ. մայիսի 30-ին¹ ընդունած որոշման բնագիրը², որը, անկախ դրա հեղինակների կամքից, բացահայտում է արևմտահայության տեղահանության իրական նպատակը, այն է՝ «լրովին ոչնչացնել ու վերացնել»³ հայերի կարծեցյալ «վտանգավոր շարժումը» և ոչ թե նրանց վերաբնակեցնել կայսրության՝ ռուսական ռազմաճակատից հեռու գտնվող տարածաշրջաններում:

¹ Բոլոր ամսաթվերը տրված են նոր տումարով:

² Կառավարության Որոշումը բաղկացած է երկու բաժնից՝ «Համառոտ նկարագրություն» և «Որոշում»: Առաջինը Թալեաթի աղճատված զեկուցագիրն է, երկրորդը՝ բուն Որոշումը: Ուստի բուն փաստաթուղթը պայմանականորեն անվանում ենք Որոշում, իսկ դրա երկրորդ բաժինը՝ «Որոշում»:

³ Տե՛ս Օսմանյան կայսրության Նախարարների խորհրդի նիստի արձանագրության բնագիրը, որը հրատարակվել է Թուրքիայի Հանրապետության կառավարության արքնթեր Պետական արխիվների Գլխավոր վարչության պաշտոնական կայքէջում. Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtname: Hülasâ-i me'âli, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>:

Սույն հոդվածում կանդրադառնանք այդ Որոշումն ընդունելու նախապատմությանը և նպատակներին, քննության կենթարկենք դրա բնօրինակը, ինչպես նաև ցույց կտանք, թե ինչպիսի հնարքներ են օգտագործում ժամանակակից թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները փաստաթղթի հիշյալ հատվածի բուն իմաստն աղավաղելու նպատակով:

Հոդվածին կցել ենք երեք հավելված: Բացի Որոշման բնագրի հայերեն թարգմանությունից, որն իրականացրել ենք առաջին անգամ¹, ներկայացնում ենք նաև բնօրինակի և դրա պաշտոնական կրկնօրինակի լուսապատճենները:

1915 թ. Մեծ եղեռնի նախապատրաստումն ընթացել է մի քանի փուլով: 1909 թ. կլիկկյան կոտորածներից հետո՝ սկսած արդեն 1910 թ., երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար կորիզի ընդերքում տեղի էին ունենում քննարկումներ, որոնք կարելի է բնութագրել որպես արևմտահայության համատարած բնաջնջման նախապատրաստման սկզբնական փուլ²: 1913 թ. ձևակերպվում է «Անատոլիան թուրքացնելու» և այդպիսով Հայկական հարցին «վերջնական լուծում» տալու գաղափարը³, որի իրականացման կոնկրետ մեթոդները քննարկվում են Առաջին աշխարհամարտի նախօրեին և առաջին ամիսներին⁴: Մեծ եղեռնի մասին վերջնական որոշումն ընդունել է Օսմանյան կայսրության և կառավարող երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների նեղ շրջանակը՝ բազմաթիվ գաղտնի խորհրդակցությունների արդյունքում: Քննարկումների ընթացքում որպես զանգվածային կոտորածների քողարկման միջոց ընտրվել է արևմտահայության լայնածավալ տեղահանության տարբերակը: Պահպանվել է Հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից՝ ներքին գործերի նախարար և երիտթուրքական կուսակցության փաստացի առաջնորդ Մեհմեթ Թալեաթ բեյի բացառիկ անկեղծ խոստովանությունը: Ըստ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի, Թալեաթն իրեն հայտնել է, որ «Միություն և առաջադիմություն» կոմիտեն «մանրազնին քննության է ենթարկել խնդիրն իր բոլոր

¹ Հրատարակել ենք նաև Որոշման բնագրի ֆրանսերեն թարգմանությունը: Տե՛ս **Safrastyan R.**, Les programmes du génocide dans l'Empire Ottoman, 2^{ème} édition revue et corrigée, Erevan, 2013, pp. 199-200.

² Այդ մասին տե՛ս **Սաֆրաստյան Ռ.**, Ինչպես էր նախապատրաստվում ցեղասպանությունը. երիտթուրքերը 1910 թ., Իրան-Նամե, 1997, թիվ 4-5-6, էջ 7:

³ Այդ մասին տե՛ս **Safrastian R.**, The Political Party and Genocide: The Committee of Union and Progress at the Threshold of the “Final Solution”, Problems of Genocide: Proceedings of the International Conference on “Problems of Genocide”, April 21-23, 1995, 1997, p. 196.

⁴ Տե՛ս նույն տեղում:

մանրամասներով», և որ «տեղահանություններն արդյունք են երկարատև ու մանրակրկիտ քննարկումների»¹: Դրանց արդյունքում 1914 թ. դեկտեմբերին կամ 1915 թ. հունվարին Օսմանյան կայսրության հինգ ղեկավար գործիչների գաղտնի խորհրդակցության ժամանակ հաստատվում է տասը կետից բաղկացած մի փաստաթուղթ, որը նախատեսում էր հայ ժողովրդի դեմ ուղղված ցեղասպանական բնույթի գործողությունների իրականացում²: Երիտթուրքական կուսակցության ղեկավար մարմնի՝ կենտրոնական կոմիտեի կողմից փաստաթղթի հաստատումից հետո փետրվարից սկսվում է ծրագրված միջոցառումների իրականացումը³:

Համաձայն մեր առաջ քաշած վարկածի՝ 1915 թ. Մեծ եղեռնի պետական ծրագիրը ձևակերպվել է երեք փաստաթղթում, որոնցից առաջինը ցեղասպանական գործողությունների տասը կետ պարունակող վերը հիշատակված վավերագիրն է: Մյուսները՝ «Տեղահանության օրենքը»⁴ և կառավարության Որոշումը, ընդունվել են ավելի ուշ՝ մայիսին: Այս երկու պաշտոնական փաստաթղթերը, ըստ դրանց հեղինակների, որոնք ներկայացնում էին երկրի կառավարման բարձրագույն մարմինները՝ սուլթանին և Նախարարների խորհուրդը, նպատակ ունեին ընդամենը «իրավական քողով» շղարշելու արդեն իսկ լայնածավալ ընթացք ստացած՝ հայ ժողովրդի բռնի տեղահանություններն ու զանգվածային կոտորածները, բայց որևէ էական նշանակություն չունեին: Սակայն մեր օրերի հետվից դրանք խիստ կարևոր են, քանի որ հնարավորություն են տալիս մեկ անգամ ևս փաստելու այն իրողությունը, որ Հայոց ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում իրականացվել է պետական քաղաքականության մակարդակով:

Ինչպես արդեն նշեցինք, հայ ժողովրդի բնաջնջման ծրագիրը, որը ղեկավարում էր Թալեաթը, սկսվում է ի կատար ածվել 1915 թ. փետրվարից: Երիտթուրքական կուսակցության փաստացի ղեկավարը լինելու հանգամանքը նրան ընձեռում էր գրեթե անսահմանափակ հնարավորություններ, քանի որ երկրում հաստատվել էր «Միություն և առաջադիմություն» կուսակցության միահեծան բռնապետական իշխանություն: Արևմտահայության կոտորածներն ու տեղահանությունները տեղի էին ունենում ըստ նրա գաղտնի հրամանների, որոնք նա փոխանցում էր տարբեր վայրերում գտնվող պետա-

¹ Ambassador Morgenthau's Story, New York, 1919, p. 333.

² Այդ փաստաթղթի և նրա հեղինակների մասին, ինչպես նաև բնագրի հայերեն թարգմանությունը տես **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 168-173:

³ Նույն տեղում, էջ 171:

⁴ Այդ օրենքի ընդունման հանգամանքներին և տեքստի վերլուծությանը ժամանակին անդրադարձել ենք: Տես **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրության 1915 թ. «Տեղահանության օրենքը», Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2007, թիվ 2 (175), էջ 72-81: Այդ հոդվածում ամբողջությամբ հրապարակել ենք նաև օրենքի պաշտոնական բնագրի հայերեն թարգմանությունը:

կան պաշտոնյաներին ու կուսակիցներին՝ տեղերում դրանք ի կատար ածելու նպատակով: Թուրքական սկզբնաղբյուրները վկայում են, որ կայսրության հայ խաղաղ բնակչության զանգվածային բնաջնջման ընթացքում Նախարարների խորհուրդը միայն մեկ անգամ՝ ապրիլի 18-ի նիստում է անդրադարձել հայերին, ի դեպ, ոչ թե նրանց տեղահանության հարցին, այլ ցեղասպանության ծրագրին առնչվող մի շարք այլ խնդիրների¹: Այս հանգամանքը մեկ անգամ ևս փաստում է, թե որքան ազդեցիկ է եղել երիտթուրքական կուսակցության իշխանությունը:

Տեղահանություններին «օրինական» բնույթ հաղորդելու խնդիրն այդ ժամանակաշրջանում թե՛ Թալեաթին և թե՛ բարձրաստիճան այլ թուրք ոճրագործների ամեննին չէր հետաքրքրում: Թերևս պատճառը նրանց համակած այն համոզմունքն էր, թե իրենց կհաջողվի խուսափել պատասխանատվությունից: Այս ենթադրությունը հաստատում են վստահելի սկզբնաղբյուրների տեղեկությունները: Այսպես, Հայոց ցեղասպանության վերապրողներից և լավագույն հետազոտողներից Հայկազն Գ. Ղազարյանը մեջբերում է Թալեաթի պատասխանն օսմանյան խորհրդարանի հայագգի պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Վարդգեսի զգուշացումներին առ այն, որ երիտթուրք պարագլուխներն ամեն դեպքում պատասխան են տալու հայ ժողովրդի նկատմամբ գործած հանցագործությունների համար. «Երկրին իշխանությունը մեր ձեռքին մեջ է և մենք կրնանք մեր ուզածը ընել... Ո՞վ է, որ մեզմե հաշիվ պիտի պահանջե՞»²:

Իրադրությունը, սակայն, կտրուկ փոխվում է այն բանից հետո, երբ 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունները՝ Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, հանդես են գալիս համատեղ Հայտարարագրով, որտեղ խստագույնս դատապարտելով հայերի զանգվածային կոտորածները և որակելով դրանք որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի... նոր հանցագործություն»՝ ընդգծում են, որ դրա պատասխանատվությունն անհատապես ընկնելու է օսմանյան կառավարության անդամների վրա³: Նույն օրը Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությունը Հայտարարագիրը հանձնում է «Հավա» հեռագրական գործակալությանը, որտեղից այն անմիջապես փոխանցվում է Կոնստանդնուպոլիս:

Հայտարարագիրը մեծ ազդեցություն է ունեցել օսմանյան կառավարության անդամների վրա, սակայն ոչնչով չի կաշկանդել նրանց գործողություն-

¹ Տե՛ս **Ercan Y.**, Ermeniler ve Ermeni Sorunu, Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37: Ermeni Sorunu özel sayısı I, s. 48.

² Տե՛ս **Ղազարյան Հ. Գ.**, Ցեղասպան թուրքը, Պեյրոթ, 1968, էջ 381:

³ Տե՛ս հայտարարագրի բնագրում Դեպարտամենտի ծանուցագիրը «Հավա» գործակալությանը. «Հրատապ, Փարիզ, 24-ը մայիսի 1915 թ.», Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում, հ. 1: Աշխատասիրությանը՝ Արթուր Պեյլերյանի: Առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի: Ֆրանսերենից թարգմանեց՝ Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, էջ 99:

ները, այլ սոսկ առաջ է բերել հանցագործությունը քողարկելու ձգտում: Կոնստանդնուպոլսում հավատարմագրված արտասահմանյան դիվանագետների պաշտոնական գրագրություններում վկայություններ կան Հայտարարագրի հետևանքների մասին: Այսպես, օրինակ, Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Յոհան Պալլավիչինին հաղորդում էր Վիեննա, որ այն հարուցել է սադրագամ (վարչապետ) Սայիդ Հալիմ փաշայի անթաքույց գայրույթը¹: 1915 թ. հունիսի 7-ին Մորգենթաուի օրագրային գրառումը ևս փաստում է այն «չափազանց գրգռված» վիճակը, որում Հայտարարագրին ծանոթանալուց հետո գտնվել է Սայիդ Հալիմը²:

Կարելի է ենթադրել, որ կառավարության անդամներից Հայտարարագրին առաջինը ծանոթացել է Թալեաթը, որը, նախկինում լինելով փոստային ծառայող և հեռագրիչ, ըստ ականատեսների վկայությունների, նույնիսկ իր կուսակիցների հետ իշխանությունը զավթելուց հետո չէր մոռացել հեռագրիչի մասնագիտությունը և իր տանը տեղադրել էր հեռագրական սարք³: Նրա մերձավոր՝ Օսմանյան կայսրության և «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար գործիչ Հալիլ փաշան⁴ իր հուշերում վկայում է, որ ցեղասպանական գործողությունների ընթացքը Թալեաթը հաճախ ղեկավարում էր այդ հեռագրական սարքի միջոցով⁵: Բացի դրանից, մայրաքաղաքում ստացվող բոլոր պաշտոնական հեռագրերը նախ հանձնում էին Թալեաթին և միայն դրանից հետո ուղարկում հասցեատերերին⁶:

Հետաքրքիր է, որ այդ ոճրագործն իրականում շատ լավ էր գիտակցում պատասխանատվության իր ահռելի բաժինը: Այդ մասին է վկայում Թալեաթի բացառիկ խոստովանությունը, որի մասին իր հուշերում հիշատակում է Հալիլը: Ըստ վերջինիս հավաստման, ի նկատի ունենալով հայերի տեղահանությունը, Թալեաթը խոստովանել է, որ այդ մասին վերջնական որոշումն ինքն է կայացրել⁷:

Մական Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո գրի առած իր հուշագրություններում, որոնք նպատակ ունեին առաջին հերթին մոլորության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը, Թալեաթը փորձում է հայերի տեղահանությունը ներկայացնել որպես հարկադրաբար իրականացված միջոցառում՝ ի պա-

¹ Pallavicini – an Baron Burian, Constantinopel, an 18. Juni 1915. – K. u K. – Dokumente: Armenien in Österreichischen Archiven (Fotokopien). Band II: 1915 – 1917. Herausgeber: Artem Ohandjanian, S. 884.

² United States Diplomacy on the Bosphorus: The Diaries of Ambassador Morgenthau 1913-1916, Compiled with an introduction by Ara Sarafian, Princeton and London, 2004, p. 249.

³ Տե՛ս Ambassador Morgenthau’s Story, p. 21.

⁴ Հետագայում ընդունել է Մենթեշե ազգանունը:

⁵ [Halil Menteşe], Osmanlı Mebusan Meclisi Reisi Halil Menteşe’nin anıları. Giriş: İsmail Arar, İstanbul, 1986, s. 216.

⁶ Ambassador Morgenthau’s Story, p. 332.

⁷ Տե՛ս [Halil Menteşe], նշվ. աշխ., էջ 216:

տասխան նրանց կարծեցյալ համընդհանուր ապստամբության¹:

Ամեննին պատահական չէր, որ Հայտարարագիրը, ըստ երևույթին, Թալեաթի մոտ առաջացրել էր մտավախություն, որ հայ ժողովրդի դեմ իրագործված ոճրագործությունների ամբողջ մեղքն Անտանտի երկրները հետագայում կվերագրեն միայն իրեն: Փորձելով խուսափել դրանից՝ նա նախաձեռնել է այնպիսի մի գործընթաց, որի նպատակն էր խուսափել ոճրագործության պատասխանատվությունը միայնակ կրելու հնարավոր հեռանկարից, դրան հաղորդել հավաքական բնույթ և այն բարդել կառավարության անդամների վրա²:

Այդ նպատակով Հայտարարագրի հրապարակումից մեկ օր անց՝ մայիսի 26-ին, նա գաղտնի զեկուցագրով դիմում է Սայիդ Հալիմ փաշային և պահանջում, որ իր՝ ներքին գործերի նախարարի կողմից արդեն իրականացվող հայերի տեղահանության մասին ընդունվի կառավարության հատուկ որոշում: Թուրքական պատմագրության մեջ շրջանառվում է զեկուցագրի աղճատված տարբերակը, որն ընդգրկվել էր մայիսի 30-ին կայացած Նախարարների խորհրդի նիստի արձանագրությունում³: Այդ «ավանդույթը», որի նախակարապետը Յուսուֆ Հիքմեթ Բայուրն է⁴, շարունակել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պաշտոնական տեսակետի հետևորդներից մեկ այլ կարկառուն դեմք՝ Քյամուրան Գյուրյունը՝ արտատպելով սուկ զեկուցագրի՝ Բայուրի հրատարակած աղճատված տարբերակը⁵:

Վերջին շրջանում թուրք հեղինակները կիրառում են մեկ այլ հնարք ևս: Նրանք հղում են Օսմանյան արխիվների Վարչապետության ֆոնդում պահվող Թալեաթի զեկուցագրի բնագիրը, սակայն խուսափում ներկայացնել փաստաթղթի ամբողջական տարբերակը և սահմանափակվում են միայն դրա որոշ դրույթների վերաշարադրմամբ: Հետաքրքիր է, որ զեկուցագրի բնագրի, ինչպես նաև դրա հայերեն թարգմանության օրինակները պահվում

¹ Talât Paşa'nın hâtıraları: Sadırazam Talât Paşa'nın tarihin bir çok gizli taraflarını aydınlatan şimdikiye kadar neşredilmemiş şahsi notları. İstanbul, 1946, s. 63-65. Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Թալեաթի հուշագրությունները հրատարակվել են փոփոխված ու խմբագրված տեսքով, ինչը ժամանակին ընդունել է նույնիսկ թուրքական պաշտոնական պատմագրության հիմնասյուներից մեկը՝ Յու. Հ. Բայուրը: Տե՛ս **Bayur Y. H.**, Ermeni Meselesi, Kaynaklar, II: Hatıralar. - Cumhuriyet, Salı / Cuma Kitabı, 26.06.1998.

² Տե՛ս, օրինակ, **Bayur Y. H.**, Türk İnkılâbı tarihi. Cilt: III: 1914 -1918: Genel Savaşı, Kısım III: 1915- 1917 vuruşmaları ve bunların siyasal tepkileri, Ankara, 1983, s. 39; **Halaoğlu Y.**, Die Armenierfrage, Klagenfurt, 2006, S. 66.

³ Տե՛ս արձանագրության բնագիրը՝ Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtname: Hülasâ-i me'âli, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>: Արձանագրությունից պարզ է դառնում, որ Նախարարների խորհրդի նիստում, նախքան որոշում կայացնելը, Թալեաթի զեկուցագիրն ընթերցվել է և կցվել արձանագրության՝ «Համառոտ նկարագրություն» վերնագրված առաջին բաժնին:

⁴ Տե՛ս **Bayur Y. H.**, նշվ. աշխ., էջ 37-38.

⁵ Տե՛ս **Gürün K.**, Ermeni dosyası. İkinci baskı, Ankara, 1983, s. 213-214.

են նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվում¹:

Այդ ուշագրավ փաստաթուղթն ամբողջությամբ հրապարակել է միայն Հ. Գ. Ղազարյանը՝ հայերեն թարգմանությամբ²: Ցավոք, նա չի ներկայացնում դրա թուրքերեն բնագիրը: Չի կարելի բացառել, որ սույն վավերագիրը եղել է Հայոց ցեղասպանությանը վերաբերող այն գաղտնի փաստաթղթերի թվում, որոնք 1921 թ. Հ. Գ. Ղազարյանը, իր իսկ հավաստմամբ, անձամբ է ընդօրինակել օսմանյան Ծովային նախարարության պաշտոնական արխիվից³:

Ծանոթությունը Թալեաթի զեկուցագրին ակնհայտ է դարձնում, թե ինչն է պատճառը, որ թուրք պատմաբանները ցանկություն չեն դրսևորում հրատարակել բնագիրն ամբողջությամբ: Այս փաստաթուղթը, չնայած այն հանգամանքին, որ պարունակում է կեղծիքների և ստերի մի ամբողջ շարան, միաժամանակ հնարավորություն է ընձեռում վերահաստատելու արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների որդեգրած՝ ցեղասպանություն իրականացնելու դիտավորությունը: Հ. Գ. Ղազարյանի թարգմանությամբ այն ձևակերպված է այսպես. «Պետության կենսական ջանքերու կարգին կարևոր գործ մըն է այս մտատանջությունը, զայն հիմնական կերպով լուծելու, վերջացնելու և ամբողջապես ջնջելու⁴ համար: Այս մասին միջոցներ պատրաստելու և պատրաստ գտնվելու մասին խորհած և նկատողության առած ենք»⁵: Թալեաթի օգտագործած արտահայտությունները՝ «հիմնական կերպով լուծել, վերջացնել և ամբողջապես ջնջել», անկախ իր կամքից, բացահայտում են տեղահանության իրական նպատակը: Ինչպես ի հայտ է գալիս փաստաթղթի համատեքստից, զեկուցագրի հեղինակին «մտատանջություն» էր պատճառում Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հայ ժողովրդի ձգտումը:

Թալեաթի զեկուցագիրը քննարկվում է Նախարարների խորհրդի մայիսի 30-ի նիստում, որի ժամանակ հավանություն է տրվում հայերի՝ արդեն ընթացքի մեջ գտնվող տեղահանությանը, և ընդունվում է համապատասխան Որոշում: Այն ստորագրել են կառավարության յոթ անդամ՝ սադրազամ Սայիդ Հալիմ փաշան, ներքին գործերի նախարար Թալեաթը, պատերազմական նախարար Էնվեր փաշան, հանրային աշխատանքների նախարար Աբբաս Հալիմ փաշան⁶, լուսավորության նախարար Ահմեդ Շյուքրյուն⁷,

¹ Տե՛ս **Akçam T.**, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton, 2012, pp. 6-7.

² Տե՛ս **Ղազարեան Հ. Գ.**, նշվ. աշխ., էջ 328:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Թարգմանության հեղինակը՝ Հ. Գ. Ղազարյանը, հաշվի առնելով «ամբողջապես ջնջելու» արտահայտության կարևորությունը, փակագծերում նշել է բնագրի թուրքերեն արտահայտությունը՝ հայերեն տառերով՝ «քյուլիյեն իզալեսի»:

⁵ **Ղազարեան Հ. Գ.**, նշվ. աշխ., էջ 325:

⁶ Սայիդ Հալիմ փաշայի եղբայրը:

⁷ Հետագայում ընդունել է Բայրնդըր ազգանունը:

առևտրի նախարար Ահմեդ Նեսիմին¹, արդարադատության նախարար Փիրիզադե Իբրահիմ Հայրուլլահը²:

Հաջորդ օրը Որոշման բնագիրը, առանց «Համառոտ նկարագրություն» բաժնի, պաշտոնապես կրկնօրինակվել է՝ համապատասխան նախարարություններ ուղարկվելու նպատակով: Այդ կրկնօրինակներից մեկը, որը պահվում է Գլխավոր շտաբի Ռազմական պատմության ու ռազմավարական հետազոտությունների վարչության և Գլխավոր տեսչության արխիվում, ընդգրկվել է թուրքական զինված ուժերի Գլխավոր շտաբի հրատարակած փաստաթղթերի ժողովածուում³:

Ինչպես արդեն նշեցինք, փաստաթղթի բնօրինակը հրատարակված է թուրք պատմաբանների կողմից և լայնորեն օգտագործվում է որպես ապացույց թուրքական պաշտոնական պատմագրության այն վարկածի, թե իբր տեղահանության նպատակը եղել է միայն արևմտահայության տեղահանությունը և ոչ թե զանգվածային կոտորածը: Հիրավի, դրանում մանրամասնորեն նշված են հայերից բխող «վտանգները», տեղահանվածների՝ վերաբնակեցման հետ կապված մի շարք խնդիրներ, հատուկ ուշադրություն է հատկացված բնակեցման նոր տարածաշրջաններում նրանց կյանքի կազմակերպման, ինչպես նաև հայրենի բնակատեղիներում լքված գույքի հարցերին և այլն⁴: Որոշման շատ դրույթներ ակնհայտորեն հետապնդում էին տեղահանության գործընթացի վրա ոչ թե իրական ներգործություն ունենալու նպատակ՝ արտաքուստ կամ ընդամենը ձևականորեն հաղորդելով դրան կարծեցյալ կազմակերպված բնույթ, այլ ստեղծում էին, ըստ Թալեաթի և նրա հանցակից գործընկերների, իրավական այնպիսի մի դաշտ, որը նրանց հնարավորություն կընձեռեր խուսափել հայ ժողովրդի բնաջնջումը տեղահանության քողի տակ իրականացնելու պատասխանատվությունից:

Սակայն «լիովին ոչնչացնել ու վերացնել» (*“imhâ ve izâlesi kat’iyyen muktezî”*) արտահայտությունն ի հայտ է բերում ոչ միայն Օսմանյան կայսրության բարձրագույն ղեկավարության բուն նպատակները, այլև ժամանակակից ցեղասպանագիտության հայեցակարգային մոտեցումների շրջանակում հնարավորություն է տալիս բացահայտելու նրա՝ տեղահանության շղարշով ցեղասպանություն իրականացնելու դիտավորությունը (*intent*)⁵:

¹ Հետագայում ընդունել է Սայման ազգանունը:

² Տե՛ս Որոշման բնագրում Meclis-i Vükelâ Müzâkerâtına Mahsûs Zabıtınâme: Hülasâ-i me’âlî, 17 Mayıs 1331. - BOA. Meclis-i Vükelâ Mazbatası, 198/163. - <http://www.devletarsivleri.gov.tr/kitap/pdf/2/17.pdf>:

³ Arşiv belgeleriyle ermeni faaliyetleri, 1914-1918 Cilt I (1914-1915), Genelkurmay ATASE ve Genelkurmay Denetleme Başkanlığı yayınları, Ankara, 2005, s. 427.

⁴ Ավելի մանրամասն տե՛ս սույն հոդվածին կցված «Որոշման» բնագրի հայերեն թարգմանությունում:

⁵ Դիտավորության հանգամանքի նշանակությանը մանրամասն անդրադարձել ենք մեր վերը հիշատակված գրքի «Տեսական հիմնադրույթներ» գլխում: Տե՛ս **Սաֆրասոյան Ռ.**,

Գիտակցելով այդ վտանգը՝ թուրք հեղինակները դիմում են մի շարք հնարքների, որոնց նպատակն է քողարկել վերը նշված արտահայտության իմաստը և խեղաթյուրելով այն՝ մոլորության մեջ ձգել ընթերցողին: Այսպես, օրինակ, թե՛ պաշտոնական թուրքական պատմագրության «դասականներ» Բայուրն ու Գյուրյունը և թե՛ նոր սերնդի ներկայացուցիչները, իրենց աշխատություններում հրատարակելով «Որոշման» օսմաներեն բնագիրը, միահամուռ խուսափում են ճշգրտորեն թարգմանել “imhâ ve izâlesi kat‘iyyen muktezi” արտահայտությունը ժամանակակից թուրքերենի՝ չվարանելով երբեմն օգտագործել ժամանակակից թուրքերենին սիրապետողների համար անհասկանալի օսմաներեն բառերի թարգմանություններ¹:

Նման հնարքը, անտարակույս, կարելի է բնութագրել որպես բավական «նուրբ»: Մակայն պաշտոնական պատվեր կատարող թուրք հեղինակները դրանով չեն սահմանափակվում: Զինված ուժերի գլխավոր շտաբի հրատարակած փաստաթղթերի ժողովածուն կազմողները² գնում են ավելի հեռուն և դիմում ակնհայտ կեղծիքի: Այդ ժողովածուում զետեղված են «Որոշման» կրկնօրինակի ժամանակակից թուրքերեն և անգլերեն թարգմանությունները, որոնց հեղինակները փորձել են «մեղմացնել» մեզ հետաքրքրող արտահայտության իմաստը: Թուրքերեն թարգմանությունում օգտագործված է “etkili bir şekilde bertaraf edilmesi mutlak surette gerekli olup” արտահայտությունը, որը կարելի է թարգմանել իբրև «բացարձակ անհրաժեշտություն է ներգործուն ձևով չեզոքացնելը»: Ակնհայտ է, որ այս թարգմանության հեղինակները³ խուսափել են ճշգրտորեն վերարտադրել բնօրինակի “imhâ ve izâlesi”՝ «նչնչացնել ու վերացնել» արտահայտության իմաստը:

Անգլերենի թարգմանիչները, որոնք ակնհայտորեն օգտվել են ոչ թե օսմաներեն բնագրից, այլ թուրքերեն թարգմանությունից, վերը նշված արտահայտությունն անվարան կրճատել են և այն ներկայացրել իբրև “ought to be eliminated effectivety”⁴, որին ընդհանուր առմամբ համարժեք է «արդյունավետորեն պետք է վերացվի» հայերեն թարգմանությունը: Դրանով իսկ նրանք ավելի են հեռացել բուն բնագրից:

Համեմատենք Նախարարների խորհրդի ընդունած որոշման օսմաներեն

Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), էջ 20-43:

¹ Տե՛ս, օրինակ, **Bayur Y. H.**, նշվ. աշխ., էջ 41-43; **Gürün K.**, նշվ. աշխ., էջ 214-215; **Akgündüz A.**, *Ermeni katliamı mı? Ermeni Tehciri mi?*, Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37; *Ermeni Sorunu özel sayısı I*, s. 361-362; **Demirel M.**, *Ermeni tehciri ve alınan tedbirler*, Yeni Türkiye, 2001, ocak-şubat, yıl 7, sayı 37; *Ermeni Sorunu özel sayısı I*, s. 400-401.

² Նրանց թվում է, օրինակ, Հայոց ցեղասպանության պատմության տխրահռչակ կեղծարար, Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալաջօղլուն:

³ Ժողովածուում նշված են թարգմանիչների անունները, սակայն չի պարզաբանվում, թե կոնկրետ ո՞վ է բնագրի թուրքերեն թարգմանության հեղինակը:

⁴ Arşiv belgeleriyle ermeni faaliyetleri, 1914-1918 Cilt I (1914-1915), Genelkurmay ATASE ve Genelkurmay Denetleme Başkanlığı yayınları, s. 134.

բնագիրն անզլերեն թարգմանության հետ: Բնագրում նշված է՝ «լիովին ոչնչացնել ու վերացնել». անզլերեն թարգմանության մեջ կարդում ենք՝ «արդյունավետորեն պետք է վերացվի»: Իմաստի փոփոխությունն ակնհայտ է: Այն է՝ կատարվել է կեղծիք:

Այսպիսով, պարզ է դառնում, որ հրատարակելով Նախարարների խորհրդի «Որոշման» բնագիրը՝ թուրք պատմաբանները փորձում են ոչ մասնագետների համար ամեն կերպ դժվարըմբռնելի դարձնել դրա բուն իմաստը: Հրապարակելով այդ փաստաթուղթը՝ նրանք ձգտում են ոչ թե Հայոց ցեղասպանության պատմության դեռևս սակավ ուսումնասիրված էջերի վրա լույս սփռել, այլ օգտագործել այն որպես լրացուցիչ «փաստարկ» տեղահանության ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ օսմանյան իշխանությունների «ցուցաբերած հոգատարության» մասին՝ կեղծ վարկածը հիմնավորելու նպատակով:

Ընդհանրացնելով նշենք, որ թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչների կողմից կոնկրետ մեկ արխիվային փաստաթղթի շուրջ ստեղծված անորոշությունների ու խարդավանքների դաշտը հարուցում է լուրջ կասկածներ և տեղիք տալիս խորհելու, որ նմանատիպ մեթոդների կիրառում կարելի է ակնկալել նաև Թուրքիայում վերջին տարիներին իրականացվող օսմանյան արխիվների փաստաթղթերի պաշտոնական հրապարակումների շատ այլ դեպքերում:

Հավելված 1

Նախարարների խորհրդի քննարկումների արձանագրություն

մվ. 198/24

Հերթական թիվ՝ 163

Ամսաթիվ

Արաբական՝ 15 Ռեջեբ տարի [1]333

Ռումի՝ 17 Մայիս տարի [1]331

Որոշում

Քննարկումների արդյունքում որոշվեց, որ անհրաժեշտ է լիովին ոչնչացնել ու վերացնել այն վտանգավոր շարժումը, որի նպատակն է խափանել պետության գոյության և անվտանգության պահպանման համար անձնագոհ կերպով իրականացվող միջոցառումները և կարգավորումները: Վերոնշյալ նախարարության կողմից այդ ուղղությամբ սկսված միջոցառումները, ակնհայտորեն, ճիշտ են: Վերոհիշյալ զեկուցագրում նշված գյուղերում ու քաղաքներում բնակվող հայերից նրանք, որոնք ենթակա են տեղահանման, պետք է բարեհաջող տեղափոխվեն ու հասնեն

այն վայրերը, ուր նրանք պետք է ուղարկվեն: Ճանապարհին գտնվելու ընթացքում պետք է ապահովել նրանց հանգստությունը և պաշտպանել նրանց կյանքն ու ունեցվածքը: Նախատեսված վայրերը հասնելուն պես՝ մինչև վերջնականապես տեղավորվելը, գաղթականների համար նախատեսված հատկացումներից կապահովվի նրանց սնունդը, համապատասխան նախապես ունեցած գույքի ու տնտեսական վիճակի նրանց կրթամակարձի անշարժ գույք և հող: Կարիքավորների համար կառավարությունը կացարաններ կկառուցի, հողագործներին և կարիք ունեցող արհեստավորներին սերմեր ու գործիքներ կբաժանվեն: Լքված վայրերում նրանց թողած ունեցվածքը և իրերը կամ վերջիններիս արժեքը համապատասխան ձևով նրանց կվերադարձվեն: Ազատված գյուղերը կբնակեցվեն գաղթականներով և աշխրեթներով, նրանց կբաժանվի անշարժ գույք և հող՝ արժեքը գնահատելուց հետո: Ազատված քաղաքներից ու գյուղաքաղաքներից տեղահանված բնակչությանը պատկանող անշարժ գույքը կցուցակագրվի և նրա տեսակը, արժեքն ու քանակը որոշելուց հետո կբաժանվի գաղթականներին: Շահույթ ապահովող ձիթենու, թթենու, խաղողի ու նարնջենու այն այգիները, ինչպես նաև խանութները, իջևանատները, գործարաններն ու պահեստատները, որոնք չեն համապատասխանում գաղթականների հետաքրքրություններին կամ զբաղմունքներին, աճուրդի միջոցով կվաճառվեն կամ կտրվեն վարձակալության: Այդ միջոցով ստացված ամբողջ գումարը գույքի տերերի անունով ժամանակավորապես կփոխանցվի գանձարան՝ նրանց տրամադրելու նպատակով: Նշված գործողությունները և միջոցառումները ֆինանսավորելու նպատակով կատարվելիք ծախսերը կհատուցվեն գաղթականների համար նախատեսված միջոցներից՝ վերոնշյալ նախարարության կողմից նախապատրաստած Կարգադրությունների բոլոր դրույթների կատարմամբ: Լքյալ գույքի պահպանումը, կառավարումը, վերաբնակեցման ընդհանուր հսկողությունը, կարգավորումը, ուսումնասիրումը և վերաքննումը, ինչպես նաև այդ ուղղությամբ Կարգադրությունների դրույթների և վերոնշյալ նախարարությունից ստացվելիք և նրա կողմից ընդունվելիք հրամանների շրջանակում որոշումների ընդունումն ու կատարումը կապահովվեն ներքին գործերի նախարարության անմիջական ենթակայության տակ գտնվող ենթահանձնաժողովների ստեղծումով, որոնց անդամները կլինեն վարձատրվող պաշտոնյաներ: Այդ ենթահանձնաժողովները կազմված կլինեն նախագահից և երկու անդամից: Նրանցից մեկը կընտրվի և կնշանակվի ներքին գործերի նախարարության կողմից, իսկ մյուսը՝ ֆինանսների նախարարության կողմից: Նպատակահարմար գտնվեց, որ տեղերում նշված Կարգադրությունների իրագործումը դրվի նահանգապետների վրա: Այս որոշման մասին տեղյակ կպահվի վերոնշյալ նախարարությանը և համապատասխան գերատեսչություններին:

تخصیصاً سویرس خدمت نھ۔ تہ سہ ایلام تنظیم ایس۔ او تو تعلیمات نام نہک تمام طبعیہ احکامہ اولہ ترکہ نامہ
 محاطہ ادارہ سہ و معادہ عمومی اسکائیہ نہک تسبیح و تطہیر و ترقیہ و تقویہ و برفہ خصوصہ تعلیمات نامہ احکامہ و نھ رتہ
 سہ ایلامہ اخذ و تعلقہ ایلام جاک ادارہ ذرہ سندہ مقررات اتحاد و تعلقہ و تالی قریب سویرس تنظیم ایلام معانی مامور استیاس
 وظیفہ و صلاحیتہ ی حار اولہ و طوریہ طوریہ رخصت نھ تہ مربوط بولندہ و بر سر ایلام برہ مامورہ وظیفہ دہ و کوی
 مامورہ ماگر دہ بجانہ و تصدیق ایلام جاک ایک اعصابہ ترکیب نامہ اور ذرہ قریب سویرس تنظیم ایلام دہ کلہ ایلام اعراض و قریب سویرس
 کو نہ رتہ بہ کلہ دہ مذکور تعلیمات نام نہک و لیدر طرح اجرائی احکامہ نسبت ایس۔ او لیدر نھک جو بیا نھ۔ تہ سہ ایلام تنظیم
 و ذوار متعلقہ مقررات اعراض ترکہ نھ۔





Ruben Safrastyan - *The Decision of the Ottoman Government on the Removal of the Armenians (1915, May 30)*

In recent years, in order to falsify the historical truth, some archival documents concerning the theme of the Armenian Genocide have been published in Turkey. However, in the publications of the kind it is possible to come across such documents, which, against the wishes of publishers throw light on the true goals of the Ottoman authorities – organizers and executors of the Armenian Genocide.

In this respect, the origin of the May 30, 1915 resolution of the Ottoman government on violent expulsion of the Armenians has an important role, which reveals the real purpose of the expulsion of the Western Armenians, i.e. “to fully exterminate and liquidate” the seeming “dangerous movement” of the Armenians and not to resettle in the regions of the Empire far from the Russian front.

The article discusses the prehistory and the objectives of making that decision, its background, it also shows what tricks the representatives of modern official Turkish historiography use in order to screen the passage cited above.